ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0009, ՀՀ, ք. Երևան, Կորյունի 15/1, 010 511 820, www.court.am

N ԴԴ-3-Ե- 68

« 09 » հունվարի 2024թ.

«ՄԵԾ ԾԻԱԾԱՆ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Գ. ԵՍԱՅԱՆԻՆ
(հասցե՝ ք. Երևան, Վ. Համբարձումյան 91)

«ՍՈՖԹ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Ա. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ
(հասցե՝ ք. Երևան, Շերամի փ. 90/6)

«ԳԼԱՆՑ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Մ. ԱՄԱՐՅԱՆԻՆ
(հասցե՝ ք. Երևան, Մաշտոցի պ, շ 10, բն 6)

«ՅՈՒՆԻՓԵՔ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Կ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ
(հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Արցախի 46/2)

ԷԴՄՈՆԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՎԱՀԵԻ Ա/Ձ-ԻՆ
(հասցե՝ Էրեբունի, Սարիթաղ 7փ, 26Ա)

ԱՆԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐՄԵՆԻ ԱՁ-ԻՆ
(հասցե՝ 11 փ. / տ / 25 Այնթապ 0803 Այնթապ Արարատ Հայաստան)

«ԴԱՎՄՈՆԹ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Ա. ԱԶԻԶՅԱՆԻՆ
(հասցե՝ ք. Երևան, Մ. Ավետիսյան 8ա/18)

«ԱՐՍՍՈՒՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ
(հասցե՝ ք. Երևան, Դավթաշեն Ձոր 1 թաղ, 88)

«ԱՐՄԱ ԼԱՅԹ» ՍՊԸ-ԻՆ

Սույնով ծանուցում եմ, որ Դատական դեպարտամենտի կարիքների համար կենցաղային, տնտեսական ապրանքների և տնտեսող լամպերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/51» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում գնահատող հանձնաժողովի կողմից առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների հայտերի գնահատման արդյունքում Ձեր կողմից ներկայացված հայտերում արձանագրվել են հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, մասնավորապես՝

«Մեծ Ծիածան» ՍՊԸ

-ներկայացված հայտում առկա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ Հավելված N 1.3-ը կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝ Հավելված 1.3-ին վերաբերող տեղեկատվության մեջ սխալ է նշված գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/51» ծածկագրի փոխարեն նշված է «ՀՀ ՀԿԿ- ԷԱՃԱՊՁԲ-ԿԱ-24/3» ծածկագիրը:

«Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ

-հայտում առկա լիազորված անձի նույնականացման քարտի պատճենում հստակ չեն երևում նույնականացման քարտի տվյալները:

«Գլանց» ՍՊԸ

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը (Հավելված N 1) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝ լրացված չէ «Մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)» դաշտը,

- ներկայացված հայտում առկա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ Հավելված N 1.3-ը կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝ լրացված չէ «Մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)» դաշտը,

- 3-րդ չափաբաժնի մասով eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը չի համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին, մասնավորապես՝ նկարագրում բացակայում են հրավերով նախատեսված «1%-անոց ջրային լուծույթի pH-ը՝ 2-7, ջրում չլուծվող մնացորդի զանգվածային մասը՝ 70%-ից ոչ պակաս, խոնավությունը՝ 2%-ից ոչ ավելի, մաքրող հատկությունը՝ 85%-ից ոչ պակաս, պետք է լինեն ոչ թունավոր և հրակայուն, պոլիմերային կամ այլ տարաներում», «Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2004 թ. դեկտեմբերի 16-ի N 1795-Ն որոշմամբ հաստատված «Մակերևութաակտիվ միջոցների և մակերևութաակտիվ նյութեր պարունակող լվացող ու մաքրող միջոցների» տեխնիկական կանոնակարգի:», «Ապրանքների տեղափոխումն ու բեռնաթափումը Գնորդի պահեստ իրականացնում է Վաճառողը՝ իր միջոցների հաշվին:», «Ապրանքները պետք է լինեն չօգտագործված, պիտանելիության ժամկետը՝ մատակարարման պահից առնվազն 1 տարի:» պայմանները,

- 20-րդ չափաբաժնի մասով Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը չի համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին, մասնավորապես՝ նկարագրում բացակայում են հրավերով նախատեսված «Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2004 թ. դեկտեմբերի 16-ի N 1795-Ն որոշմամբ հաստատված «Մակերևութաակտիվ միջոցների և մակերևութաակտիվ նյութեր պարունակող լվացող ու մաքրող միջոցների» տեխնիկական կանոնակարգի:», «Ապրանքների տեղափոխումն ու բեռնաթափումը Գնորդի պահեստ իրականացնում է Վաճառողը՝ իր միջոցների հաշվին:», «Ապրանքները պետք է լինեն չօգտագործված, պիտանելիության ժամկետը՝ մատակարարման պահից առնվազն 1 տարի:» պայմանները:

«ՅՈՒՆԻՓԵՔ» ՍՊԸ

-ներկայացված հայտում առկա փաստաթղթերը հաստատված են լիազորված անձի էլեկտրոնային թվային ստորագրությամբ, հայտով ներկայացված է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ՝ լիազորագիր, սակայն լիազորագրով «Յունիփեք» ՍՊԸ-ի տնօրենը լիազորել է հիշյալ անձին էլեկտրոնային **մրցույթների** շրջանակներում էլեկտրոնային թվային ստորագրությամբ ստորագրել և ներկայացնել հայտի փաթեթ, պայմանագրեր և այլ փաստաթղթեր, այն դեպքում, երբ քննարկվող գնման գործընթացը կազմակերպվել է ոչ թե **մրցույթի**, այլ **էլեկտրոնային աճուրդի** ընթացակարգով:

Ա/Ձ Էդմոնդ Հովհաննիսյան Վահեի

-ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝

- դիմում-հայտարարության երրորդ նախադասությունում գործունեության հասցեն լրացված է ոչ ամբողջական, ինչպես նաև լրացված չէ մասնակցի ռուսերեն լեզվով կազմակերպաիրավական տեսակը (լրացված է միայն մասնակցի ռուսերեն լեզվով անվանումը),
- դիմում-հայտարարության 1)-ին կետում ներառված չէ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/51» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին մասնակցին փոխկապակցված անձանց բավարարելու մասին հավաստումը,
- դիմում-հայտարարությունը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

ԱՁ Անի Մանուկյան Արմենի

-ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝ դիմում-հայտարարության 1)-ին կետում ներառված չէ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/51» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին մասնակցին փոխկապակցված անձանց բավարարելու մասին հավաստումը:

«ԴԱՎՄՈՆԹ» ՍՊԸ

- ներկայացված հայտում առկա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝ հայտարարագրում նշված կայքէջի հղումը սխալ է՝ հղմամբ հնարավոր չէ տեսնել հրապարակված հայտարարագիրը:

«ԱՐՍՍՈՒՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ

- 9-րդ չափաբաժնի մասով Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը չի համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին, մասնավորապես՝ նկարագրում բացակայում է հրավերով նախատեսված «Ապրանքները պետք է լինեն չօգտագործված և փաթեթավորված:» պայմանը:

«ԱՐՄԱ ԼԱՅԹ» ՍՊԸ

- «ԱՐՄԱ ԼԱՅԹ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա չեն «ԱՐՄԱ ԼԱՅԹ» ՍՊԸ-ի կողմից հաստատված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/51» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով պահանջվող փաստաթղթերը (հայտում առկա Ստարտկոպի ՍՊԸ-ի փաստաթղթերը գնահատող հանձնաժողովի կողմից չեն քննարկվել),

- 22-րդ, 23-րդ, 24-րդ, 25-րդ, 26-րդ, 27-րդ, 28-րդ չափաբաժինների մասով Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին, մասնավորապես՝ նկարագրերում բացակայում են հրավերով նախատեսված «Ապրանքների տեղափոխումն ու բեռնաթափումը Գնորդի պահեստ իրականացնում է Վաճառողը՝ իր միջոցների հաշվին:», «Ապրանքները պետք է լինեն չօգտագործված և փաթեթավորված, տեխնիկական բնութագրում նշված պարամետրերի մակնշմամբ:» պայմանները:

Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, ինչպես նաև «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/51» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 8.11 կետը՝ առաջարկում եմ մինչև սույն թվականի **հունվարի 10-ը ներառյալ** eauction.armeps.am համակարգի միջոցով շտկել վերոնշյալ անհամապատասխանությունները:

Միաժամանակ հայտնում եմ, որ սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները չշտկելու դեպքում՝ հայտերը կգնահատվեն անբավարար և կմերժվեն:

ՂԵԿԱՎԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԱԿԱԼ

ԱՐՇԱԿ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

Կատ՝. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/51» ծածկագրով գնման ընթացակարգի համակարգող՝ Ա. Խաչատրյան
Հեռ.՝ /+37410/ 511-787, 511-788